ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Ակադեմիական հայագիտությունն ու արևելագիտությունը ծանր կորուստ կրեցին. օգոստոսի 25-ին վախճանվեց Մոսկվա բուժման մեկնած անվանի գիտնական, ԳԱԱ փոխպրեզիդենտ, հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Գագիկ Սարգսյանը։



Մասնագիտական շրջաններում համընդհանուր ճանաչում և հեղինակություն վայելող գիտնականը ծնվել է 1926-ին, ապրիլի 6-ին՝ Երևանում, գրականագետ, պրոֆ. Խորեն Սարգսյանի ընտանիքում։ 1946—1950 թթ. ուսանել է Լենինգրադի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, մասնագիտանալով հին պատմության գծով։ Այստեղ նրա ուսուցիչներն են եղել ակադեմիկոս Վ. Վ. Ստրուվեն, պրոֆեսորներ Ս. Ի. Կովալյովը, Ք. Կոլորովան։ Ի մասնավորի կողմնորոշված Գ. Սարգսյանը դուգահեռաբար հաճախել է նույն համալսարանի արևելյան ֆակուլտետում սեպագրագիտական-ասուրագիտական առարկաների և աքքադերեն (ասուրա-բաբելոներեն) և ուրարտերեն լեզուների դասընթացների, որոնք վարում էր խոշոր արևելագետ Ի. Մ. Դյակոնովը։

1951—1954 թթ. Գ. Սարգսյանն անցել է ասպիրանտուրա ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքում պրոֆ. Ե. Մ. Սերգեենկոյի ղեկավարությամբ։ 1954 թ. հաջողությամբ պաշտպանել է «Հին Հայաստանի բազաքը» թեկնածուական դիսերտացիան և վերադարձել Երևան, աշխատանքի անցել պատմության ինստիտուտում։ Նրա հետագա առաջընթացի նշանաձողերն են՝ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղար (1956—1962), պատմության ինստիտուտի փոխտնօրեն, Նորաստեղծ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիայի փոխպրեզիդենտ (1988—1990, 1995-ից մինչև օրս), հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար։

Գ. Խ. Սարգսյանը պատմական գիտությունների դոկտոր էր, պրոֆեսոր, 1974-ին ընտրվել է ԳԱ թղթակից-անդամ, 1986 թ.՝ ակադեմիկոս։ Նա արևելագիտության ինստիտուտի դիսերտացիոնների պաշտպանության գիտական խորհրդի նախագահն էր, պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտների, Մաշտոցի անվան Մատենադարանի և այլ հաստատությունների գիտական խորհուրդների անդամ։ Գ. Խ. Սարգսյանը «Պատմա-բանասիրական հանդեսի», ինչպես նաև «Вестник древней истории» (Մոսկվա) հանդեսի խմբագրական հանձնաժողովների անդամ էր, «Հայաստան-Հունաստան» ընկերության նախագահ, Սիրիայի գիտության պատմության ընկերության պատվավոր անդամ։

Գ. Սարգսյանի գիտական գործունեությունը սկզբից մինչև օրս ընթանում էր երկու ուղղությամբ՝ հայագիտության և սեպագրագիտության-ասուրագիտության։ Նրա ստեղծագործական խառնվածքին միշտ հատուկ է եղել պատմության կոնկրետ խնդիրները պատմական լայն համատեքստում դիտելու հատկությունը։

Իր «Տիգրանակերտ» ուսումնասիրության մեջ, մի շարք հոդվածներում և «Հին Հայաս-

տանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին» մենագրության մեջ նա Հայաստանին հատկացրել է ժամանակի՝ աշխարհին հատուկ ստրկատիրական հասարակությունների հանակարգում իր ուրույն տեղը, որը բնութագրվում է անտիկ՝ հունա-հռոմեական հասարակություններին հատուկ դասական ստրկությունից իր ունեցած մեծ տարբերություններով։

Նա ներգրավել է միանգամայն անսպասելի աղբյուր հեռավոր Բաբելոնիայի հելլենիստական դարաշրջանի աստղաբաշխական-սեպագրական մի օրագրի պատմական ժամանակագրություն պարունակող տվյալները։

Գ. Սարգսյանի գիտահետազոտական հետաքրքրությունների շարքում առանձնակի տեղ է գրավում պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»։ Սույն խնդիրը քննարկվել է նրա երեք մենագրություններում և տասնյակ հոդվածներում։

Գ. Սարգսյանի խորենացիագիտական աշխատությունների հրապարակ գալը պատմագիտական այնպիսի բայլ էր, որ իրենով նշանավորեց Մովսես Խորենացու և նրա «Հայոց պատմության» հետ կապված պրոբլեմների ուսումնասիրման մի նոր ու բարձր աստիճան։

Ակադեմիկոս Գ. Սարգսյանն ուներ գիտնականի իր կայուն սկզբունքները, որոնք պահպանում էր սրբորեն։

Որպես հայագետ և ասորագետ, Գ. Սարգսյանը քաջ հայտնի է Արևմուտքում։ Զեկուցումներով նա մասնակցել է բազմաթիվ գիտական ժողովների, կազմակերպել բազմաթիվ գիտաժողովներ Հայաստանում։ Մահից մեկ շաբաթ առաջ նա Երևանի հիվանդանոցում խորհրդակցություն էր գումարել սեպտեմբերին կայանալիք «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» սիմպոզիումին պատրաստվելու կապակցությամբ։

Գ. Սարգսյանը հայ ժողովրդի պատմության ութհատորյակի ակադեմիական հրատարակության առաջին հատորի խմբագրի տեղակալն էր և հելլենիստական ժամանակաշրջանի բաժնի, ինչպես և հայ ժողովրդի պատմության 5—6-րդ դասարանների դպրոցական դասագրքերի հեղինակներից մեկը։

Պատմաբան Գ. Սարգսյանի բանասիրական-լեզվական հիմնավոր պատրաստությունը միաձուլվում էր երևույթները կուռ տրամաբանական հիմքի վրա վերլուծելու ի վերուստ տրված անուրանալի տաղանդի հետ։ Այդ ամենին եթե ավելացնենք Հին Հայաստանի և Հին Արևելքի պատմության ասպարեզում խոր ու լայն պատրաստությունը, ապա հասկանալի կդառնա, թե ինչու գիտական հասարակությունը նրանից մշտապես նոր ծանրակշիռ ներդրումներ էր ակնկալում։

Անուրանալի է ակադեմիկոս Գ. Սարգսյանի գիտական վաստակը և անմոռանալի՝ նրա նկարագիրը։

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրական խորհուրդը և խմբագրության աշխատակիցները խոր վիշտ են հայտնում «Հանդեսի» խմբագրական խորհրդի երկարամյա անդամ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի մահվան կապակցությամբ և ցավակցում են նրա ընտանիքին ու հարազատներին։